

«ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ ԷՔՎԱՅՐԻՆԳԻ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկ՝ «ՅՈՒՆԻԲԱՆԿ» ԲԲԸ (գրանցված ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 09.10.2001թ. թիվ 260-Ա որոշմամբ, բանկային գործունեության լիցենզիա թիվ 81)։

Առևտրի կետ՝ Բանկի հետ վճարային քարտերով էքվայրինգի/ինտերնետ էքվայրինգի ծառայության մատուցման դիմում-պայմանագիր կնքած իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող հաճախորդի կողմից հիմնադրված, ապրանքների վաճառքով և (կամ) ծառայությունների մատուցմամբ զբաղվող առևտրի/սպասարկման կետ։ Ընդ որում՝ սույն Պայմանների իմաստով «Առևտրի կետ» եզրույթը ներառում է նաև Բանկի՝ էքվայրինգի ծառայության (ներառյալ՝ ինտերնետ էքվայրինգի ծառայության) հաճախորդ հանդիսացող իրավաբանական անձին կամ անհատ ձեռնարկատիրոջը։

Կողմեր՝ Բանկը և Առևտրի կետը։

էքվայրինգի ծառայություն (այսուհետ՝ նաև Ծառայություն)՝ Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է Առևտրի կետի կողմից POS տերմինալի կամ ՀԴՄ-POS տերմինալի միջոցով ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց քարտով վճարումների ընդունումը և դրանց հաշվարկների կատարումը։

Ինտերնետ էքվայրինգի ծառայություն (այսուհետ՝ նաև Ծառայություն)՝ Բանկի կողմից տրամադրվող ծառայություն, որով Բանկն ապահովում է Առևտրի կետի կողմից կայքում տեղադրված Վիրտուալ POS տերմինալի միջոցով ապրանքների վաճառքի և (կամ) ծառայությունների մատուցման դիմաց քարտով վճարումների ընդունումը և դրանց հաշվարկների կատարումը։

Ծառայություն՝ եզրույթ, որը սույն Պայմանների իմաստով ներառում է էքվայրինգի ծառայությունը և ինտերնետ էքվայրինգի ծառայությունը։

POS տերմինալ՝ էլեկտրոնային սարք, որը նախատեսված է Առևտրի կետում վճարային քարտով անկանխիկ գործառնություն կատարելու համար։

ՀԴՄ-POS տերմինալ՝ Հաճախորդին պատկանող ՀԴՄ սարք, որը համապատասխան արտոնագրի և ծրագրային ապահովման առկայության դեպքում կարող է ծառայել որպես POS տերմինալ։

Վիրտուալ POS տերմինալ՝ ծրագրային ապահովում, որը հնարավորություն է ընձեռնում առևտրի/սպասարկման կետին ընդունել առցանց վճարումներ վճարային քարտերի միջոցով։

Տերմինալ՝ POS տերմինալ, ՀԴՄ-POS տերմինալ և/կամ վիրտուալ POS տերմինալ։

Սարքավորումներ՝ POS տերմինալ կամ ՀԴՄ-POS տերմինալ և վերջիններիս աշխատանքն ապահովող անհրաժեշտ տեխնիկածրագրային պարագաներ։

Վճարային քարտ (այսուհետ՝ նաև քարտ)՝ դեբետային, վարկային, էլեկտրոնային քսակի կամ

միջազգային պրակտիկայում ընդունված այլ տեսակի քարտի ձևով վճարային գործիք է, որն օգտագործվում է կանխիկ դրամ ստանալու կամ անկանխիկ եղանակով վճարումներ կատարելու, ինչպես նաև վճարային քարտ թողարկող բանկի սահմանած այլ գործառնություններ կատարելու համար:

Քարտապան՝ ֆիզիկական և (կամ) իրավաբանական անձ, անհատ ձեռնարկատեր, որը թողարկողի հետ կնքել է վճարային քարտի թողարկման և սպասարկման համար բանկային հաշվի գրավոր պայմանագիր:

Վճարահաշվարկային համակարգ՝ միջազգային կամ տեղական միասնական համակարգ, որն ապահովում է համապատասխան համակարգում թողարկված վճարային քարտերով գործարքների իրականացումը:

Հայաստանյան վճարահաշվարկային համակարգ՝ ՀՀ տարածքում վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգն է կամ ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող վճարահաշվարկային համակարգ, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ է (ARCA համակարգ):

Արտասահմանյան վճարահաշվարկային համակարգ՝ ՀՀ տարածքից դուրս վճարումների կատարումն ապահովող օտարերկրյա կամ միջազգային վճարահաշվարկային համակարգն է, որի օպերատորը ՀՀ ռեզիդենտ չէ (մասնավորապես, VISA և MasterCard համակարգեր):

3D Secure համակարգ՝ առցանց միջավայրում իրականացվող գործարքների անվտանգությունը ապահովելու նպատակով ստեղծված գործիք, որից օգտվելու պարագայում հաճախորդը իր կողմից առցանց միջավայրում կատարած գործարքը հաստատում է իր բջջային հեռախոսին SMS-հաղորդագրության միջոցով ստացված կոդի կիրառմամբ:

Թողարկող բանկ՝ վճարային քարտը թողարկող բանկ:

Հավաստագրում (ավտորիզացիա)՝ վճարային քարտով գործարքի կատարման համար թողարկող բանկի թույլտվությունը ստանալու գործընթաց:

Գործարք՝ Առևտրի կետի կայքի կամ առևտրի կետում տեղադրված սարքավորման միջոցով քարտով կատարված գործարք:

Ծանուցում՝ Ծառայության հետ կապված՝ Բանկի կողմից Առևտրի կետին տրամադրվող ծանուցումները, նյութերը/փաստաթղթերը, սույն պայմանների փոփոխման մասին տեղեկատվությունը, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված այլ տեղեկատվություն:

Ձեռնարարություն՝ գործառնություն, որը կատարվել է առանց Քարտապանի թույլտվության, վերջինիս Քարտի տվյալների անօրինական օգտագործման միջոցով:

Հետվճար՝ Գործարքի գումարի վերադարձ Քարտապանի Քարտին՝ Առևտրի կետի նախաձեռնությամբ:

ԳԼՈՒԽ 1. ԴԻՄՈՒՄ-ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՅՈՒՄ

1.1. Պայմանները սահմանում են էքվայրինգի Ծառայությունից օգտվող Առևտրի կետ(եր)ի և Բանկի՝ որպես էքվայրինգի ծառայություն մատուցողի փոխհարաբերությունների պայմանները:

1.2. Բանկը Առևտրի կետին մատուցում է էքվայրինգի ծառայություն՝ Բանկի և Առևտրի կետի միջև կնքված դիմում-պայմանագրի հիման վրա:

1.3. Դիմում-պայմանագրում ուղղակիորեն նշված՝ Ծառայության պայմանների հետագա փոփոխությունների մասին Առևտրի կետի դիմումը Բանկ կարող է ներկայացվել Բանկի սահմանած ձևանմուշով: Առևտրի կետի հանձնարարականը Բանկը դիտարկում և կատարում կամ մերժում է ՀՀ օրենսդրությամբ, վճարահաշվարկային համակարգերի կանոններով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում: Այդ փոփոխությունների ուժի մեջ մտնելուց հետո փոփոխվող պայմանի հետ կապված մինչ այդ տրված դիմումները համարվում են ուժը կորցրած: Պայմանների իմաստով՝ դիմում-պայմանագրով ներկայացված դիմումներն ու ընտրված պայմանները կիրառելի են դրանց հետագա բոլոր փոփոխություններով:

1.4. Պայմանները և Սակագները սահմանվում և կարող են միակողմանիորեն փոփոխվել Բանկի կողմից Բանկի պաշտոնական կայքում: Պայմաններում և Սակագներում կատարված փոփոխությունները Բանկն Առևտրի կետին ծանուցում է մինչև դրանց ուժի մեջ մտնելը՝ Բանկի

պաշտոնական կայքում դրանք հասանելի դարձնելու, նաև հրապարակելու միջոցով, ինչպես նաև Առևտրի կետին Ծանուցումներ ուղարկելու համար սահմանված հաղորդակցման եղանակով: Բանկն իրավունք ունի միակողմանի փոխել էքվայրինգի ծառայության գործարքների միջնորդավճարի չափը՝ այդ մասին սույն Պայմանագրով սահմանված կարգով նախապես ծանուցելով Առևտրի կետին:

1.5. Բանկը Պայմանագրի կնքման օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում իրականացնում է Ծառայության ակտիվացման համար անհրաժեշտ գրանցումները և տվյալների տրամադրումը Առևտրի կետին, եթե Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն Բանկի կողմից իրականացվող ուսումնասիրության արդյունքում առկա չեն ծառայության տրամադրումն արգելող հիմքեր:

ԳԼՈՒԽ 2. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԻՑ ՕԳՏՎԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

2.1. Բանկն ապահովում է Առևտրի կետի կայքում կամ Առևտրի կետում տեղադրված սարքավորման միջոցով իրականացվող գործարքների շուրջօրյա հավաստագրումը, ինչպես նաև գործարքների գումարներն անկանխիկ փոխանցում է Առևտրի կետին Պրոցեսինգային կենտրոնից գործարքների հաստատումը ստանալուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ գանձելով միջնորդավճար՝ Բանկի և Առևտրի կետի միջև համաձայնեցված և/կամ պայմանագրում ըստ քարտատեսակների նշված չափով, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ: Բանկը փոխանցում է այն գործարքների գումարները, որոնք կատարվել են դիմում-պայմանագրին և Պայմանների պահանջներին համապատասխան:

2.2. Վճարումը համարվում է հաստատված, եթե Պրոցեսինգային կենտրոնի կողմից ստացվել է համապատասխան կոդ:

2.3. Առևտրի կետը պարտավորվում է մերժել Գործարքը, եթե.

2.3.1. այն հանդիսանում է արդեն վճարված ապրանքների և/կամ ծառայությունների դիմաց վճարում,

2.3.2. այն չի հանդիսանում Առևտրի կետից ապրանքներ գնելու կամ ծառայություններից օգտվելու նպատակով վճարում,

2.3.3. նախապես հայտնի է, որ առկա է Ձեղծարարության վտանգ կամ Քարտը, վճարումը, վճարման պայմանները կամ որևէ այլ տեղեկություն կասկած են հարուցում:

2.4. Քարտապանի կողմից Գործարքի իրականացումը դադարեցնելու, անվավեր ճանաչելու մասին հրահանգ ստանալու դեպքում Առևտրի կետը պարտավոր է անհապաղ իրականացնել Հաճախորդի հրահանգը: Գործարքի անվավեր ճանաչում է համարվում ընդունված վճարման վերադարձը Քարտապանի հաշվին, երբ ապրանքը չի առաքվել կամ ծառայությունը չի մատուցվել:

2.5. Արգելվում է վճարումներ ընդունելիս վճարվող գումարին ավելացնել հարկեր, տուրքեր, վճարներ, եթե այդպիսիք նախատեսված չեն ՀՀ օրենսդրությամբ:

2.6. ՀՀ օրենսդրությամբ սահմանված լիներալի դեպքում հարկերը, տուրքերը կամ վճարները պետք է գնանշվեն ապրանքի կամ ծառայության գնի հետ միասին մեկ գումարով կամ առանձին, սակայն գնի հետ միաժամանակ և նույն կերպ և գանձվեն մեկ գումարով:

2.7. Առևտրի կետը պարտավորվում է չափահանել ապրանքների և/կամ ծառայությունների համար վճարման մի մասը կամ հավելյալ վճարում իրականացնել ներկայացվող Քարտից բացի այլ Քարտով կամ այլ եղանակով, եթե այդպիսի վճարման նախաձեռնողը Քարտապանը չէ:

2.8. Բանկը կարող է Առևտրի կետի՝ Բանկի նկատմամբ առաջացած դրամական պարտավորություններն անակցեպտ կարգով գանձել Առևտրի կետի Բանկում սպասարկվող դրամային և անհրաժեշտության դեպքում նաև արտարժույթային հաշիվներից:

2.9. Բանկը կարող է Առևտրի կետի հետ Պայմանների ներքո ծագած իրավահարաբերության ընթացքում Առևտրի կետից պահանջել մուտքագրել պահուստային դրամական միջոցներ՝ կախված Առևտրի կետի գործարար բնութագրից և գործունեության տեսակից: Նման դեպքերում Բանկն Առևտրի կետի հաշվին պահուստային դրամական միջոցների վրա սահմանափակում սահմանելուց հետո **երկու** աշխատանքային օրվա ընթացքում այդ մասին ծանուցում է Առևտրի կետին: Բանկն իրավունք ունի նշված պահուստային միջոցների՝ Առևտրի կետի կողմից օգտագործումը

սահմանափակել նաև դիմում-պայմանագրի դադարեցումից հետո մինչև **վեց** ամսվա ընթացքում, ինչպես նաև այդ միջոցներից գանձել դիմում-պայմանագրի գործողության ընթացքում և Պայմանագրի դադարեցումից հետո ի հայտ եկած՝ Ծառայության հետ կապված ծախսերն ու Պայմանների խախտման հետևանքով Բանկին պատճառված վնասների գումարները: Սույն կետում նշված պահուստային գումարների չափերը ներկայացված են Պայմանների Հավելված 1-ում:

2.10. Բանկը պարտավորվում է Առևտրի կետի կողմից իրականացված հետվճարման գործարքների (Refund) և/կամ բողոքարկված գործարքների գումարները Քարտապաններին հետ վերադարձվելու դեպքում Առևտրի կետի բանկային հաշվին վերադարձնել Գործառնության համար իր կողմից գանձված միջնորդավճարը:

2.11. Բանկը կարող է Առևտրի կետի կայքում իրականացվող գործարքների համար սահմանել մեկ գործարքի առավելագույն գումարային սահմանաչափ, այդ մասին տեղեկացնելով Առևտրի կետին: Սույն կետում նշված սահմանաչափերը ներկայացված են Պայմանների Հավելված 1-ում:

2.12. Ինտերնետ Էքվայրինգի ծառայության ներքո Առևտրի կետին տրվում է հնարավորություն վճարումներ ընդունել ՀՀ դրամով և տվյալ պահին Ծառայության ներքո Բանկի կողմից առաջարկվող արտարժույթի տեսակներով: Առևտրի կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել «Արժույթային կարգավորման և արժույթային վերահսկողության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան:

2.13. Գործարքներն արտարժույթով իրականացնելու հնարավորության դեպքում կայքում պետք է առկա լինի տեխնիկական լուծում, որով Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող գործարքները կկատարվեն միայն ՀՀ դրամով:

2.14. Բանկն Առևտրի կետին տրամադրում է հնարավորություն Ինտերնետ Էքվայրինգի ծառայությունը գործարկել հայերենով, իսկ տեխնիկական հնարավորության առկայության դեպքում՝ նաև այլ լեզուներով: Առևտրի կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել լեզվի վերաբերյալ ՀՀ օրենսդրական պահանջներին համապատասխան:

2.15. Եթե Ինտերնետ Էքվայրինգի ծառայության շրջանակներում Առևտրի կետն իրականացնում է ապրանքների վաճառք՝ առաքման միջոցով կամ ապրանքը Առևտրի կետի տարածքից ստանալու (in-store pick up) տարբերակով, գործարքի հիմնավորող փաստաթուղթը պետք է կազմված լինի հայերեն կամ հայերենով նման փաստաթուղթ կազմելու անհնարինության դեպքում՝ անգլերեն և պարունակի հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) պատվերի համարը,
- 2) ապրանքի նկարագրություն,
- 3) պատվիրատուի անուն, ազգանունը,
- 4) պատվիրատուի էլեկտրոնային հասցեն,
- 5) պատվիրատուի հեռախոսահամարը,
- 6) ապրանքի առաքման / ստացման հասցե,
- 7) ապրանքի առաքման/ստացման ամսաթիվ, ժամ,
- 8) ստացողի անուն, ազգանուն,
- 9) ստացողի հեռախոսահամարը,
- 10) ստացողի ստորագրություն,
- 11) բանկային քարտի համարի վերջին 4 նիշը, որով իրականացվել է ապրանքի դիմաց վճարումը:

2.16. Եթե Առևտրի կետը Ինտերնետ Էքվայրինգի ծառայության շրջանակներում կիրառում է արտոնյալ կամ անվճար փորձարկման ժամանակահատված, ապա այդ ժամկետի ավարտից ոչ ուշ, քան 7 (յոթ) օր առաջ Առևտրի կետը պարտավոր է էլեկտրոնային փոստով ծանուցել քարտապանին նախատեսվող գանձման և այն չեղարկելու համար անհրաժեշտ քայլերի մասին:

2.17. Առևտրի կետը պարտավոր է պահպանել քարտերով կատարված գործարքների մասին մանրամասն տեղեկատվությունը (էլեկտրոնային անդորրագրերը, լոգերը և այլ հիմնավորող փաստաթղթերը) **երեք** տարվա ընթացքում՝ սկսած գործարքի կատարման օրվանից՝ պահպանելով դրանց ամբողջականությունը, եթե ավելի երկար ժամկետ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված չէ՝

կախված Առևտրի կետի գործունեության ոլորտից, և Բանկի առաջին իսկ պահանջով **երեք** աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել դրանք Բանկին:

2.18. Առևտրի կետն իրավունք չունի քարտերով վճարվող գործարքների համար սահմանել հավելավճարներ և/կամ այլ պայմաններ, քան այլ վճարման եղանակների համար:

2.19. Առևտրի կետն իրավասություն չունի տրամադրել քարտապաններին կանխիկ գումար՝ կատարված անկանխիկ գործարքների դիմաց: Քարտերով կատարված գործարքն անվավեր ճանաչվելու/չեղարկվելու դեպքում գործարքի գումարը վերադարձվում է քարտին անկանխիկ եղանակով:

2.20. Առևտրի կետն իրավունք չունի կատարել գանձում քարտապանից, եթե տեղի չի ունեցել ստորև նշված պայմաններից առնվազն մեկը.

1) գործարքը հաստատվել է,

2) ապրանքը կամ ծառայությունը առաքվել կամ տրամադրվել է (սա չի վերաբերում մասնակի կամ լրիվ կանխավճարով գործարքներին),

3) ստացվել է քարտապանի համաձայնությունը որոշակի պարբերականությամբ գանձումների համար:

2.21. Առևտրի կետն իրավունք չունի քարտապանից պահանջել վերջինիս բանկային հաշվեհամարը և օգտագործել այդ հաշվեհամարը այլ նպատակներով, քան Առևտրի կետի կողմից մատուցվող ծառայությունների կամ վաճառվող ապրանքների դիմաց վճարումներ ընդունելու համար, ինչպես նաև վճարահաշվարկային համակարգերի կողմից իրականացվող՝ բանկային հաշվեհամարների կարգավիճակի ստուգման ծառայությունից օգտվելու համար:

2.22. Առևտրի կետը դիմում-պայմանագրի գործողության ընթացքում Բանկից սարքավորումները և/կամ ծրագրային ապահովումը ժամանակավոր օգտագործման ընդունում է կողմերի լիազոր ներկայացուցիչների միջև ստորագրված հանձնման-ընդունման ակտով:

2.23. Առևտրի կետը պարտավոր է ապահովել ժամանակավոր օգտագործման տրամադրված սարքավորումների և ծրագրային ապահովման նկատմամբ պատշաճ հսկողությունը և շահագործումը: Առևտրի կետի մեղքով դրանց վնասման կամ կորստի ենթարկվելու դեպքում Առևտրի կետը պարտավորվում է մեկշաբաթյա ժամկետում ամբողջությամբ հատուցել վնասվածքի կամ կորստի հետևանքով Բանկին պատճառված վնասը:

2.24. Սարքավորումների վերանորոգումն իրականացվում է գրավոր հայտի ստացման պահից երկու աշխատանքային օրվա ընթացքում: Եթե վերանորոգումը նշված ժամկետում հնարավոր չէ իրականացնել, ապա Բանկը փոխարինում է սարքավորումը մեկ այլ նմանատիպ սարքավորմամբ:

ԳԼՈՒԽ 3. ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԻ ԿԱՅՔԻ ՀԱՄԱՐ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

3.1. Առևտրի կետը պարտավոր է Բանկի հետ համաձայնեցված եղանակով կառուցել և շահագործել իր կայքի՝ քարտերով վճարումներ ընդունելու համար օգտագործվող մասը:

3.2. Առևտրի կետն իրավասու է ձևափոխել և/կամ տրամադրել երրորդ անձանց Բանկի կողմից տրամադրված համակարգչային ծրագրերը, նորմատիվ փաստաթղթերը և այլ նյութերը:

3.3. Առևտրի կետը պարտավոր է օգտվել Ինտերնետ էքվայրինգի ծառայությունից միայն դիմում-պայմանագրում նշված կայքում վաճառքների համար: Առևտրի կետն իրավունք չունի վճարման համար ներկայացնել այնպիսի գործարքներ, որոնք մեկ այլ առևտրի կետում կատարված վաճառքների արդյունք են:

3.4. Առևտրի կետը կրում է իր կայքի կառուցման և շահագործման հետ կապված բոլոր ծախսերը:

3.5. Առևտրի կետը քարտերով վճարումները պարտավորվում է ընդունել միայն Բանկի և Բանկին սպասարկող պրոցեսինգային կենտրոնի (այսուհետ՝ Պրոցեսինգային կենտրոն) կողմից ներկայացված հատուկ պահանջներին համապատասխան եղանակով:

3.6. Առևտրի կետը պետք է ունենա գործարքների իրականացման կայքի և Բանկին ներկայացված՝ Առևտրի կետի կողմից գործածվող կայքերի դոմենների նկատմամբ իրավասությունները հավաստող փաստաթուղթ, որը պետք է ներկայացվի Բանկ՝ վերջինիս առաջին իսկ պահանջի դեպքում:

3.7. Կայքը պետք է պարունակի առնվազն հետևյալ տեղեկատվությունը՝

- 1) վաճառվող ապրանքների/ծառայությունների ամբողջական նկարագրությունը, գինը
- 2) իրավաբանական անձի/անհատ ձեռնարկատիրոջ վերաբերյալ տեղեկատվությունը՝ ներառյալ հասցեն և հեռախոսահամարը,
- 3) կոնտակտային այլ տվյալներ (էլեկտրոնային փոստի հասցե, ֆաքս և այլն),
- 4) գործարքների իրականացման արժույթը,
- 5) ապրանքի առաքման պայմանները՝ ժամկետը, տարածաշրջանները, որտեղ կարելի է ստանալ ապրանքները և/կամ ծառայությունները,
- 6) վճարային համակարգերի լոգոները՝ տեղադրված կայքի առաջին էջում,
- 7) հետվերադարձի պայմանները,
- 8) գաղտնիության քաղաքականություն:

ԳԼՈՒԽ 4. ԲԱՆԿԻ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Բանկն իրավունք ունի՝

4.1.1. Առևտրի կետին չփոխհատուցել տվյալ գործառնությունների գումարները կամ եթե դրանք արդեն փոխհատուցվել են, կատարել Առևտրի կետի հաշիվներից անակցեպտ գանձում, իսկ հաշիվներին միջոցների անբավարարության դեպքում պահանջել Առևտրի կետից փոխհատուցել այդ գումարները, եթե.

ա. իրականացված գործառնությունն անվավեր է սույն Պայմանների 5-րդ գլխի համաձայն կամ՝

բ. վեճի (այդ թվում՝ դատական վեճի) առարկա հանդիսացող գործառնությունների գումարները (վեճը Առևտրի կետի օգտին լուծվելու դեպքում, այն վերադարձվում է Առևտրի կետին),

գ. սույն Պայմանների 4.1.8 ենթակետով նախատեսված գումարները:

Ընդ որում՝ Առևտրի կետի կողմից Հավաստագրման կենտրոն ներկայացված/ էլեկտրոնային ֆայլի հիման վրա Առևտրի կետի օգտին դրամական միջոցների մուտքագրման/փոխանցման փաստն անվերապահորեն չի հանդիսանում կատարված գործառնությունը վավեր համարելու անառարկելի հիմք:

4.1.2. Առևտրի կետի օգտին հետագայում վճարվող և փոխհատուցման ենթակա գումարներից իրականացնել անակցեպտ կարգով պահում այն գումարների չափով, որոնք վճարային համակարգից ստացված պահանջի հիման վրա գանձվել են Բանկից անվավեր էլեկտրոնային գործառնությունների կատարման հետևանքով և/կամ գանձվել են սույն Պայմանների 5-րդ գլխի պահանջներին չհամապատասխանող էլեկտրոնային գործառնությունների ձևակերպման հետևանքով:

4.1.3. Առևտրի կետի անձնակազմի և պատասխանատու աշխատակիցների կողմից Պայմանների դրույթների պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակով իրականացնել ստուգումներ Առևտրի կետի կողմից ապրանքների /աշխատանքների, ծառայությունների/ տրամադրման/մատուցման վայրերում և/կամ ինտերնետային կայքում/հավելվածում, ինչի համար Առևտրի կետը պարտավոր է Բանկի առաջին իսկ պահանջով Բանկի համապատասխան աշխատակիցներին տրամադրել մուտքի իրավասություն /ֆիզիկական և/կամ վիրտուալ/:

4.1.4. Սույն Պայմաններով իր կողմից ստանձնած իրավունքներն ու պարտականություններն իր հայեցողությամբ զիջել երրորդ անձի՝ զիջման մասին գրավոր ծանուցելով Առևտրի կետին:

4.1.5. Առևտրի կետից պահանջել դիմում-պայմանագրի 10-րդ կետում նշված ծախսերի փոխհատուցում, եթե Առևտրի կետն առանց հիմնավոր պատճառների տերմինալի տեղադրումից հետո 6 ամիս և ավել ժամկետի ընթացքում չի իրականացնում դիմում-պայմանագրով նախատեսված միջին ամսական կտրվածքով նվազագույն շրջանառությունը կամ երեք ամսվա ընթացքում չի կատարել որևէ գործարք տերմինալով կամ տեղադրել է այլ բանկի տերմինալ: Նշված դեպքերում

Բանկն իրավունք ունի միակողմանիորեն խզել դիմում-պայմանագիրը՝ այդ մասին 7 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնելով Առևտրի կետին:

4.1.6. Սույն Պայմանների 4.1.8 ենթակետում նշված ծախսերի փոխհատուցման նպատակով՝ սույնով Առևտրի կետը հանձնարարում է Բանկին անակցեպտ կերպով նշված գումարները գանձել Առևտրի կետի՝ Բանկում սպասարկվող ցանկացած բանկային կամ ավանդային հաշվից:

4.1.7. Ցանկացած ժամանակ միակողմանիորեն խզել դիմում-պայմանագիրը, այդ մասին 7 աշխատանքային օր առաջ գրավոր տեղեկացնելով Առևտրի կետին:

4.1.8. Առևտրի կետից պահանջել Բանկի կողմից կատարված ծախսերի և կրած վնասի հատուցում, որոնք առաջացել են.

ա. Առևտրի կետի կողմից անվավեր գործարքների կատարման հետևանքով,

բ. վճարային համակարգերի կամ իրավասու պետական մարմինների կողմից Բանկին տուգանելու հետևանքով՝ կապված Առևտրի կետի գործունեության հետ կամ՝

գ. Առևտրի կետի կողմից դիմում-պայմանագրով սահմանված պարտավորությունների խախտման հետևանքով:

Ընդ որում՝ սույն ենթակետով նախատեսված իրավունքը պահպանվում է դիմում-պայմանագրի գործունեությունը դադարելուց հետո 3 տարվա ընթացքում:

4.1.9. Դիմում-պայմանագիրը կնքելուց առաջ, ինչպես նաև դրա գործունեության ողջ ընթացքում կատարել Առևտրի կետի կայքի ստուգումներ/մոնիտորինգ՝ տեղեկատվական անվտանգության տեսանկյունից հնարավոր խոցելիությունների հայտնաբերման նպատակով: Դրանց բացահայտման դեպքում Բանկն իր հայեցողությամբ կարող է պահանջել Առևտրի կետից վերացնել դրանք կամ ծանուցել Դիմում-պայմանագիրը վաղաժամկետ լուծելու մասին:

4.1.10. Դիմում-պայմանագրի ստորագրումից հետո 12 ամիսների ընթացքում Առևտրի կետի նախաձեռնությամբ դիմում-պայմանագրի և/կամ յուրաքանչյուր POS տերմինալի կամ ՀԴՄ-POS տերմինալի գործունեության վաղաժամկետ դադարեցման դեպքում իր հայեցողությամբ կիրառել միանվագ տուգանք մինչև 50.000 ՀՀ դրամի չափով:

4.1.11. Դիմում-պայմանագրի գործողության ընթացքում յուրաքանչյուր POS տերմինալի վնասման կամ կորստի հետևանքով Բանկի ծառայությունից օգտվելու անհնարինության դեպքում իր հայեցողությամբ կիրառել միանվագ տուգանք մինչև 50.000 ՀՀ դրամի չափով:

4.2. Բանկը պարտավոր է՝

4.2.1. Ապահովել քարտերով կատարվող գործառնությունների շուրջօրյա հավաստագրումը Հավաստագրման կենտրոնի միջոցով:

4.2.2. Ապահովել Առևտրի կետին տրամադրված ծրագրային ապահովման սպասարկումը:

4.2.3. Ապահովել Առևտրի կետին անհրաժեշտ սարքավորումներով, հրահանգչական, գովազդա-տեղեկատվական և այլ նյութերով:

4.2.4. Առևտրի կետի համապատասխան աշխատակիցներ հետ անցկացնել ուսուցում՝ Բանկի կողմից տեղադրված POS տերմինալի կամ ՀԴՄ-POS տերմինալի անխափան աշխատանքն ապահովելու նպատակով:

4.3. Առևտրի կետն իրավունք ունի՝

4.3.1. Պահանջել Բանկից ապահովել տեղադրված տերմինալները շահագործելու համար անհրաժեշտ հրահանգչական և այլ նյութերով:

4.3.2. Պահանջել Բանկից տերմինալի վերանորոգման իրականացում, իսկ դրա անհնարինության դեպքում՝ նոր տերմինալի տրամադրում դիմում-պայմանագրով սահմանված կարգով և ժամկետներում: Ընդ որում՝ Առևտրի կետի աշխատակիցների մեղքով կամ անփութության հետևանքով տերմինալի վերանորոգման անհրաժեշտություն առաջանալու դեպքում Բանկի կողմից կատարված բոլոր ծախսերը փոխհատուցվում են Առևտրի կետի կողմից:

4.3.3. Ստանալ Բանկից կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվություն:

4.4. Առևտրի կետը պարզավոր է՝

4.4.1. Պահպանել դիմում-պայմանագրի և սույն Պայմանների դրույթները, ինչպես նաև Բանկի կողմից Առևտրի կետին տրամադրված հրահանգչական նյութերի պահանջները:

4.4.2. Անհապաղ Բանկին գրավոր տեղեկացնել իր կարգավիճակի, գործունեության ոլորտի, բանկային հաշվի, գրանցման հասցեի, գործունեության վայրի կամ ինտերնետային կայքի հասցեի, էլեկտրոնային փոստի հասցեի և այլ անհրաժեշտ վավերապայմանների փոփոխության մասին, այդ փոփոխությունները կատարելուց առնվազն 5 օր առաջ:

4.4.3. Ապահովել Բանկից ստացված ծրագրային ապահովման պատշաճ հսկողությունը և կրել լրիվ գույքային պատասխանատվություն այն վնասելու կամ կորստի ենթարկելու համար:

4.4.4. Նպատակային օգտագործել և Քարտերով գործառնություններ իրականացնելիս կիրառել միայն Բանկի կողմից տեղադրված տերմինալները և համապատասխան ծրագրային ապահովումը, չփոխանցել դրանք որևէ հիմքով երրորդ անձի:

4.4.5. Չընդունել և Բանկին և/կամ Հավաստագրման կենտրոնին իր անունից չփոխանցել այլ կազմակերպությունների և/կամ նրա աշխատակիցների, մասնավոր անձանց կողմից տրամադրված վճարային քարտերի օգտագործմամբ կատարված գործառնություններով քարտերի էլեկտրոնային ֆայլերը:

4.4.6. Առևտրի կետին կողմից ծառայությունների/աշխատանքների/ապրանքների տրամադրման վայրերում, կայքում կամ հավելվածում տեղադրել ArCA, VISA, MasterCard վճարային համակարգերի լոգոտիպն արտացոլող գովազդային նյութերը:

4.4.7. Բանկի կողմից տրամադրված տերմինալներով աշխատելու թույլտվություն տրամադրել բացառապես Առևտրի կետի այն պատասխանատու անձանց, որոնք անցել են համապատասխան ուսուցում:

4.4.8. Առանց Բանկի գրավոր համաձայնության երրորդ անձանց չձանդթացնել Բանկի կողմից տրամադրված ծրագրային ապահովման կառուցվածքի, նրա տեխնիկական տվյալների հետ, ինչպես նաև չիրականացնել որևէ փոփոխություն ծրագրային ապահովման մեջ:

4.4.9. Դիմում-պայմանագրով և Պայմաններով նախատեսված դեպքերում Բանկի կողմից ներկայացված առաջին իսկ պահանջով, բայց ոչ ուշ, քան 2 աշխատանքային օրվա ընթացքում, փոխհատուցել Բանկին պատճառված վնասը /այդ թվում՝ վճարային համակարգերին Բանկի կողմից վճարված ցանկացած տուգանք կամ փոխհատուցում/, ինչպես նաև վճարել դիմում-պայմանագրով Բանկին հասանելիք բոլոր տուգանքները:

4.4.10. Առնվազն երեք տարի ժամկետով պահպանել քարտերի օգտագործմամբ ձևակերպված առևտրային անդորրագրերի, POS-ի անդորրագրերի երկրորդ օրինակները, չեկերը, հաշիվները: Այդ անդորրագրերի կորստի դեպքում Առևտրի կետի կողմից ներկայացված այլ ապացույցները չեն կարող համարվել հիմնավորված:

4.4.11. Բանկի կողմից ներկայացված առաջին իսկ պահանջի դեպքում մեկ օրվա ընթացքում տրամադրել Բանկին սույն դիմում-պայմանագրին և սույն Պայմաններին համապատասխան իրականացված գործարքների փաստաթղթերի պատճենները:

4.4.12. Առևտրի կետի կողմից դիմում-պայմանագրի և/կամ սույն Պայմանների դրույթները խախտելու դեպքում Բանկին իրավունք է վերապահվում անհապաղ միակողմանիորեն լուծել դիմում-պայմանագիրը:

4.4.13. Քարտերն անվերապահորեն ընդունել որպես իր կողմից մատուցվող ծառայությունների և իրացվող ապրանքների/աշխատանքների դիմաց վճարման միջոց, Քարտերը սպասարկելիս կիրառել այնպիսի նույնանման գներ, որոնք կիրառելի են տվյալ ապրանքի/ծառայության/աշխատանքի դիմաց տվյալ պահին կանխիկ դրամական միջոցներով վճարում կատարելիս:

4.4.14. Ապահովել ամսական կտրվածքով դիմում-պայմանագրով սահմանված նվազագույն շրջանառությունը, հակառակ դեպքում Բանկն իրավունք ունի գանձել ամսական սպասարկման վճար՝ 3000 ՀՀ դրամ գումարի չափով:

4.4.15. Սույն պայմանների 4.1.5 ենթակետով նախատեսված դեպքերում Բանկի կողմից համապատասխան ծանուցում ստանալուց հետո 7 աշխատանքային օրվա ընթացքում իրականացնել դիմում-պայմանագրի 10-րդ կետում նշված ծախսերի հատուցում, եթե դրանք չեն կատարվել դիմում-պայմանագիրը կնքելիս:

4.4.16. Բանկում բացված հաշվին ապահովել Բանկի կողմից սահմանված նվազագույն մնացորդի առկայությունը, որի չափը կարող է միակողմանիորեն ցանկացած ժամանակ փոխվել Բանկի կողմից, այդ մասին 3 օր առաջ ծանուցելով Առևտրի կետին:

4.4.17. Դիմում-պայմանագրում հստակ նշել Առևտրի կետի գործունեության ոլորտը, առաջարկվող ապրանքների, ծառայությունների նկարագիրը, կայքի հասցեն, ինչպես նաև Բանկին տեղյակ պահել դրանց ցանկացած փոփոխության մասին, այն կատարելուց 5 օր առաջ: Եթե Առևտրի կետը տեղյակ չի պահում Բանկին վերոնշյալ փոփոխությունների մասին և դրանք հայտնաբերվում են ստուգման արդյունքում, ապա Բանկն իր հայեցողությամբ կարող է անհապաղ խզել Առևտրի կետի հետ գործարար հարաբերությունները կամ տրամադրել ժամկետ համապատասխան փոփոխություններն իրականացնելու համար: Հայտնաբերված խախտման յուրաքանչյուր դեպքի համար Բանկի կողմից կարող է գանձվել միանվագ տույժ՝ 50.000 ՀՀ դրամի չափով:

ԳԼՈՒԽ 5. ԱՆՎԱՎԵՐ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5.1. Քարտի օգտագործմամբ գործառնությունը համարվում է անվավեր, եթե.

5.1.1. գործառնությունը կատարվում է սույն դիմում-պայմանագրի կամ սույն Պայմանների դրույթների խախտմամբ,

5.1.2. Առևտրի կետի կողմից Բանկ և/կամ Հավաստագրման կենտրոն փոխանցված էլեկտրոնային ֆայլի, չեկի կրկնօրինակը չի համապատասխանում քարտապանի մոտ գտնվող չեկի կրկնօրինակին,

5.1.3. գործառնությունը կատարելու օրվա դրությամբ վճարային քարտի գործողության ժամկետը լրացել է կամ դեռ վրա չի հասել,

5.1.4. քարտապանի կողմից ապրանքի/ծառայության/աշխատանքի դիմաց Առևտրի կետին վճարված գումարը գերազանցում է նույնանման ապրանքի/ծառայության/ աշխատանքի համար Առևտրի կետի կողմից կանխիկ հաշվարկների դեպքում սահմանված արժեքը,

5.1.5. գործառնության գումարը գերազանցում է Բանկի կողմից սահմանված սահմանաչափը, իսկ Բանկից և/կամ Հավաստագրման կենտրոնից հարցում չի կատարվել հավաստագրման կողի համար կամ հավաստագրման կողը ձեռք է բերվել առանց Բանկի գրավոր համաձայնության այլ հավաստագրման կենտրոնից,

5.1.6. չեկը կազմված է թերի կամ դիմում-պայմանագրով կամ սույն Պայմաններով նախատեսված կանոնների և պայմանների խախտմամբ,

5.1.7. չեկը/ֆայլը ներկայացվել է Բանկի և/կամ Հավաստագրման կենտրոն սահմանված ժամկետների ուշացմամբ,

5.1.8. Քարտի համարը մտցված է Stop-թերթ, որը ներկայացված է Առևտրի կետին, իսկ հավաստագրման կողը չի հարցվել կամ

5.1.9. տերմինալի չեկի վրա տպագրված քարտի համարը չի համապատասխանում վճարային քարտի վրա դաջված քարտի համարին /բացառությամբ APPLE PAY-ով կամ GOOGLE PAY-ով կատարված վճարումների/:

5.2. Սույն Պայմանների 5.1 կետում նշված գործառնությունները, դիմում-պայմանագրի պահանջներին չհամապատասխանող, ինչպես նաև սահմանված կարգով մշակման համար ոչ պիտանի չեկերը/էլեկտրոնային ֆայլերը համարվում են որպես պայմանականորեն ընդունված: Նմանատիպ գործառնությունների գումարները փոխհատուցվում են Բանկի կողմից առանց այդպիսի փոխհատուցման ժամանակային սահմանափակումների միայն վճարային համակարգերի կողմից վերջնական փոխհատուցում ստանալուց հետո:

5.3. Առևտրի կետն ամբողջությամբ պատասխանատվություն է կրում անկանխիկ
Հանրային էջ 9/15

գործառնությունների, մասնավորապես՝ key entered և refund տիպի գործարքների արդյունքում առաջացած ռիսկերի համար, այն է, եթե գործարքի դիմաց Բանկը քարտ թողարկող բանկից չի ստանում հատուցում կամ ստանում է մասնակի հատուցում կամ ստացված հատուցումը հետ է պահանջում: Բանկն իրավունք ունի առաջացած ռիսկի գումարի չափով սառեցնել Առևտրի կետի հաշիվը/հաշիվները, ինչպես նաև հատուցում ստանալ սույն կետում նշված գործարքների արդյունքում Բանկի կողմից վճարված գումարների չափով: Ստորագրելով դիմում-պայմանագիրն՝ Առևտրի կետը լիազորում է Բանկին անակցեպտ կարգով հատուցման ենթակա գումարները գանձել Բանկում ունեցած իր բոլոր հաշիվներից:

ԳԼՈՒԽ 6. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄՇՏԱԴԻՏԱՐԿՈՒՄ

6.1. Առևտրի կետում չպետք է իրականացվեն ՀՀ օրենսդրության և վճարահաշվարկային համակարգերի կանոնների համաձայն արգելված կամ անօրինական գործարքներ: Նման գործարքների բացահայտման դեպքում Առևտրի կետի նկատմամբ կարող է կիրառվել տուգանք՝ համապատասխան վճարահաշվարկային համակարգի կողմից սահմանված կարգով և չափով, ընդ որում կարող է դիտարկվել տուգանք չկիրառելը կամ մասամբ կիրառելը, եթե Առևտրի կետը նախքան վճարահաշվարկային համակարգից խախտման վերաբերյալ ծանուցում ստանալը կարգավորել է խնդիրը:

6.2. Առևտրի կետի հետ սույն Պայմանների ներքո ծագած իրավահարաբերությունների ընթացքում Բանկն իրավունք ունի կատարել քարտային գործարքների և կայքի նկատմամբ սահմանված պահանջների ապահովման մշտադիտարկում՝ վճարահաշվարկային համակարգերի պահանջների և Բանկի ներքին իրավական ակտերի համաձայն:

6.3. Բանկը կարող է սահմանափակել Առևտրի կետի բանկային հաշվի միջոցների տնօրինումը Առևտրի կետի կողմից՝ բողոքարկվող գործարքի գումարի չափով՝ տվյալ տեսակի բողոքարկման պարզաբանման համար վճարահաշվարկային համակարգերի կանոններով սահմանված ժամանակահատվածով, բայց ոչ ավելի, քան **վեց** ամսով, եթե Առևտրի կետում քարտով վճարում կատարած անձը բողոքարկում է տվյալ Առևտրի կետում գործարք կատարելու փաստը:

6.4. Բանկը կարող է Առևտրի կետից (կամ նրա բանկային հաշիվներից) անակցեպտ գանձել գործարքների գումարները՝ Պայմանների խախտումով կամ ապօրինաբար կատարված լինելու, ինչպես նաև երրորդ անձի կողմից Բանկին գումարի վերադարձման պահանջ ներկայացվելու և այդ պահանջի հիմնավոր լինելը Բանկի կողմից հաստատվելու դեպքերում՝ այդ մասին տեղեկացնելով Առևտրի կետին:

6.5. Առևտրի կետը պարտավորվում է Բանկին հատուցել այն ծախսերը, որոնք Բանկը կրում է բողոքարկված գործարքի հետ կապված՝ Առևտրի կետի պահանջով վճարահաշվարկային համակարգերի կանոններին համապատասխան բողոքարկման գործընթացի արբիտրաժային փուլին մասնակցելու դեպքում:

6.6. Առևտրի կետն իրավունք չունի ընդունել քարտով վճարում, եթե տիրապետում է կամ կարող է տիրապետել տեղեկատվության այն մասին, որ գործարքը զեղծարար/ոչ իրավաչափ է կամ կատարվում է առանց քարտապանի համաձայնության/թույլտվության:

6.7. Առևտրի կետն իրավունք չունի ընդունել վճարում այնպիսի գործարքի համար, որը նախկինում բողոքարկվել է քարտապանի կողմից:

6.8. Առևտրի կետը պարտավորվում է քարտերով կասկածելի կամ ոչ իրավաչափ գործարքների հայտնաբերման կամ նման կասկածի դեպքում անմիջապես հայտնել այդ մասին Բանկին:

ԳԼՈՒԽ 7. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԿԱՍԵՑՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԴԱԴԱՐԵՑՈՒՄ

7.1. Բանկն իրավունք ունի ժամանակավորապես կասեցնել Ծառայության տրամադրումը՝ սույն Պայմաններով սահմանված կարգով այդ մասին ծանուցելով Առևտրի կետին, վերջինիս կողմից սույն Պայմանների խախտման, այդ թվում՝ Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարելու դեպքում, ինչպես նաև կիրառել Ծառայության այլ սահմանափակումներ՝

վճարահաշվարկային համակարգ(եր)ի կողմից Բանկին նման պահանջ ներկայացվելու դեպքում:

7.2. Առևտրի կետի կայքի խափանման/թերի աշխատանքի և/կամ կայքում զեղծարար գործարքների բացահայտման կամ կասկածի դեպքում Բանկն իրավասու է, նախապես էլեկտրոնային եղանակով տեղեկացնելով Առևտրի կետին, ցանկացած պահի իր հայեցողությամբ՝ միակողմանի կասեցնել կամ դադարեցնել Ինտերնետ էքվայրինգի ծառայության մատուցումը, ինչպես նաև ժամանակավոր կասեցնել Առևտրի կետի բանկային հաշվի և դրանում առկա միջոցների տնօրինման հնարավորությունը՝ մինչև գործարքների պարզաբանումը: Նման գործարքներից առաջացող բոլոր վնասների պատասխանատվությունը կրում է Առևտրի կետը:

7.3. Բանկն իրավունք ունի միակողմանիորեն, առանց Առևտրի կետին նախօրոք տեղեկացնելու, կասեցնել/դադարեցնել Քարտով կատարվող վճարումներ կամ այլ Գործարքների հավաստագրումը հետևյալ դեպքերում:

7.1.1. առկա է Զեղծարարության վտանգ, Առևտրի կետի կողմից Պայմանների պահանջների խախտման կասկած կամ Առևտրի կետն իրականացրել է գործողություններ, որոնք հակասում են Պայմանների կետերին, համարվում են ոչ իրավաչափ կամ ապօրինի,

7.1.2. Առևտրի կետից օգտվող հաճախորդներին Քարտերի միջոցով վճարված ապրանքների դիմաց առաքված ապրանքները կամ մատուցված ծառայությունները չեն համապատասխանում Առևտրի կետի կողմից Բանկ ներկայացված դիմում-պայմանագրում նշված գործունեության և/կամ ապրանքների կամ ծառայությունների նկարագրությանը,

7.1.3. Առևտրի կետը կատարել է փոփոխություն դրամեի անվան մեջ՝ առանց դրա մասին Բանկին նախապես տեղեկացնելու,

7.1.4. Առևտրի կետի ինտերֆեյսը չի համապատասխանում Պայմաններով ներկայացվող պահանջներին,

7.1.5. Առևտրի կետը ծավալում է գործունեություն, որը կարող է վնասել Բանկի հեղինակությանը կամ համբավին կամ իրականացնում է սույն Պայմանների 4.1 կետով սահմանված արգելված գործունեության տեսակներից որևէ մեկը,

7.1.6. Առևտրի կետը Բանկի կողմից ծառայության ակտիվացման համար համապատասխան կարգավորումները ստանալուց հետո **երեք** ամսվա ընթացքում չի իրականացրել ինտեգրում կամ չի իրականացրել որևէ գործարք,

7.1.7. վճարահաշվարկային համակարգ(եր)ի կողմից՝ Առևտրի կետի հետ դիմում-պայմանագիրը դադարեցնելու մասին Բանկին պահանջ ներկայացվելու դեպքում,

7.1.8. Առևտրի կետի կողմից այնպիսի գործունեության իրականացման դեպքում, որը կարող է վտանգել կամ վնասել վճարահաշվարկային համակարգ(եր)ի բարի համբավը:

7.4. Սույն Պայմանների 5.3 կետով սահմանված դեպքերում, Բանկը պարտավոր է ծանուցել Առևտրի կետին՝ նշելով հավաստագրման դադարեցման պատճառները, վերսկսման պայմաններն ու ժամկետները: Ծանուցումն ուղարկվում է Առևտրի կետի կողմից դիմում-պայմանագրում նշված էլեկտրոնային փոստի հասցեին հավաստագրման դադարեցման օրվան հաջորդող **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում:

7.5. Եթե առկա է Զեղծարարության վտանգ, ապա Բանկն իրավունք ունի իրականացնել կասկածելի Գործարքի Հետվճար և/կամ պահանջել Առևտրի կետից չիրականացնել Քարտի միջոցով ընդունված վճարումների դիմաց ապրանքների առաքումը կամ ծառայությունների մատուցումը՝ մինչև Քարտը թողարկված բանկից Գործարքի իրավաչափ լինելու մասին հաստատում ստանալը:

7.6. Եթե Առևտրի կետն իրականացրել է Քարտի միջոցով ընդունված վճարումների դիմաց ապրանքների առաքումը կամ ծառայությունների մատուցումը մինչև Բանկի կողմից Զեղծարարության վտանգի մասին ահազանգի ստացումը, ապա Բանկն իրավունք ունի Բանկին ներկայացվելիք բողոքարկման հայտերը բավարարելու նպատակով սառեցնել Առևտրի կետի կողմից ընդունված վճարումների գումարը Գործարքի կատարման օրվանից **180** օր տևողությամբ:

7.7. Բանկն իրավասու է միակողմանի կասեցնել/դադարեցնել Պայմանագիրը՝ այդ մասին՝ **հինգ** աշխատանքային օր առաջ նախապես ծանուցելով Առևտրի կետին, հետևյալ դեպքերում.

1) Պայմանների և կնքված դիմում-պայմանագրի դրույթների խախտման դեպքում,

2) ՀՀ օրենսդրության պահանջներին և/կամ Բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին համապատասխան,

3) Բանկի օրինական պահանջները Առևտրի կետի կողմից չկատարելու, այդ թվում՝ Բանկի նկատմամբ պարտավորությունները ժամանակին չվճարվելու, Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը կամ փաստաթղթերը չտրամադրվելու դեպքում,

7.8. Ընդ որում, Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում սույն Պայմանների 5.3 և 5.7 կետերում նշված դեպքերում Առևտրի կետի կրած վնասների համար, իսկ Առևտրի կետը պարտավոր է հատուցել Բանկին վերջինիս կողմից սույն Պայմանների 5.3 և 5.7 կետերում նշված դեպքերում կրած բոլոր վնասները, կորուստներն ու ծախսերն ամբողջ ծավալով:

7.9. Առևտրի կետն իրավասու է դադարեցնել դիմում-պայմանագրի գործունեությունն՝ այդ մասին նախապես 7 օր առաջ գրավոր ծանուցելով Բանկին և մարելով Ծառայության հետ կապված Բանկի նկատմամբ ունեցած պարտավորություններն ամբողջությամբ:

7.10. Ծառայության դադարեցումը չի դադարեցնում Առևտրի կետի՝ Բանկի նկատմամբ ձևավորված պարտավորությունները:

7.11. Կողմերը պարտավորվում են դիմում-պայմանագրով սահմանված իրենց պարտավորությունները կատարել նաև Ծառայության միջոցով կատարված այն գործարքների համար, որոնք կատարվել են նախքան դիմում-պայմանագրի դադարեցումը, սակայն վճարման համար Բանկ են ներկայացվել դիմում-պայմանագրի դադարեցումից հետո:

7.12. Առևտրի կետը պարտավոր է դիմում-պայմանագրի դադարեցման պահից մեկ տարվա ընթացքում նախքան դիմում-պայմանագրի դադարեցումը սույն Պայմանների խախտման հետևանքով Բանկին, այդ թվում՝ Բանկի բարի համբավին կամ հեղինակությանը պատճառված վնասի կամ ֆինանսական կորստի ամբողջ գումարի չափով փոխհատուցել Բանկին, ինչպես նաև փոխհատուցել նշված խախտումը վերացնելու համար Բանկի կողմից կատարված այլ ծախսերը:

ԳԼՈՒԽ 8. ՏՎՅԱԼՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

8.1. Բանկն իրավունք ունի սույն Պայմանների ներքո ծագած իրավահարաբերության ամբողջ ընթացքում Առևտրի կետից պահանջել հավելյալ տեղեկատվություն՝ ի լրումն Բանկ ներկայացված տեղեկատվության և փաստաթղթերի:

8.2. Առևտրի կետը պարտավոր է Բանկին ներկայացնել կայքի միջոցով վաճառվող ապրանքների և/կամ մատուցվող ծառայությունների վերաբերյալ Բանկի կողմից պահանջվող տեղեկատվությունը:

8.3. Բանկն իրավունք ունի, առանց Առևտրի կետին լրացուցիչ տեղեկացնելու, Առևտրի կետի վերաբերյալ տեղեկատվություն տրամադրել վճարահաշվարկային համակարգերին, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում և կարգով ՀՀ կենտրոնական բանկին և իրավապահ մարմիններին:

8.4. Բանկը պահպանում է Պայմաններից բխող պարտավորությունների կատարման ընթացքում Բանկին հայտնի դարձած գործարքների գաղտնիությունը: Այդ տեղեկությունները կարող են տրամադրվել երրորդ անձանց ՀՀ օրենսդրությամբ և սույն Պայմաններով սահմանված դեպքերում, այդ թվում՝ Բանկի հետ համագործակցող կազմակերպություններին, որոնք ներգրավված են Ծառայության տրամադրման գործընթացում և/կամ իրականացնում են պատվիրակված գործառնություններ:

8.5. Բանկի և քարտապանի այն բանկային գաղտնիքը, որը հասանելի է դարձել Առևտրի կետին Պայմանների համաձայն վճարային քարտով վճարումներ ընդունելիս, ենթակա չէ բացահայտման Առևտրի կետի կողմից:

8.6. Արգելվում է Քարտապանից ճշտել, պահանջել տեղեկատվություն այլ նպատակներով, քան Առևտրի կետի կողմից սույն Պայմաններով սահմանված կարգով ապրանքների և ծառայությունների համար վճարումն ընդունելը:

8.7. Քարտապանի տվյալների և գործարքների տվյալների պաշտպանության նպատակով Առևտրի կետում գործարքները պետք է իրականացվեն վճարային քարտերի տվյալների անվտանգության PCI DSS ստանդարտին և վճարահաշվարկային համակարգերի՝ տվյալների

պաշտպանության այլ պահանջներին համապատասխան:

8.8. Առևտրի կետը պարտավորվում է անհապաղ տեղեկացնել Բանկին ցանկացած երրորդ անձի, այդ թվում՝ Առևտրի կետին ծառայություն մատուցողի կողմից քարտապանի տվյալներին հասանելիության իրական հնարավորություն ունենալու և/կամ այն օգտագործելու մասին: Նման հնարավորության կիրառումը երրորդ անձի կողմից պետք է նախապես համաձայնեցված լինի Բանկի հետ և համապատասխան լինի ՀՀ օրենսդրության և վճարահաշվարկային համակարգերի կանոններին: Առևտրի կետը պարտավորվում է հավաստիանալ, որ Առևտրի կետին ծառայություններ մատուցող այն երրորդ անձը, որին հասանելի են դառնում քարտապանի տվյալները և գործարքների տվյալները, համապատասխանում է վճարային քարտերի տվյալների անվտանգության PCI DSS ստանդարտին և վճարահաշվարկային համակարգերի՝ տվյալների պաշտպանության այլ պահանջներին:

8.9. Առևտրի կետը պարտավոր է հայտով ներկայացված՝ Առևտրի կետի վերաբերյալ ցանկացած տեղեկատվության փոփոխության մասին անհապաղ գրավոր տեղյակ պահել Բանկին:

8.10. Առևտրի կետն իր կայքի խափանման, գործարքների կառավարման ծրագրային մուտքի տվյալները երրորդ անձանց հասանելի դառնալու դեպքերում անմիջապես տեղեկացնում է Բանկին այդ մասին և անմիջապես կասեցնում է քարտերի սպասարկման գործընթացը մինչև Բանկից լրացուցիչ հրահանգի ստացումը:

8.11. Առևտրի կետը պարտավոր է համագործակցել վճարահաշվարկային համակարգի պահանջով իրականացվող՝ քարտային տվյալների գաղտնիության խախտման կասկածելի դեպքերի հետաքննություն (forensic investigation) իրականացնող կազմակերպությունների հետ՝ հետաքննության ամբողջ ընթացքում:

ԳԼՈՒԽ 9. ԿՈՂՄԵՐԻ ՄԻՋԵՎ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒՄԸ

9.1. Առևտրի կետը հանձնարարում է Բանկին Ծանուցումներն իրեն տրամադրել իր կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկելու միջոցով:

9.2. Ծանուցումը Բանկի կողմից ուղարկվելու դեպքում Առևտրի կետը համարվում է պատշաճ ծանուցված ծանուցումն ուղարկելու օրը՝ անկախ այն հանգամանքից, թե երբ է վերջինս փաստացի ստանում այն: Ծանուցումը Բանկի կողմից առձեռն Առևտրի կետի լիազոր ներկայացուցչին հանձնելու պարագայում Առևտրի կետը համարվում է պատշաճ ծանուցված՝ հրաժարվելով Պայմաններով սահմանված որևէ եղանակով լրացուցիչ ծանուցվելուց:

9.3. Առևտրի կետը Բանկի հետ կապ հաստատելու համար կարող է օգտագործել Բանկի պաշտոնական կայքում (www.unibank.am) հրապարակված Բանկի կոնտակտային տվյալները, եթե դիմում-պայմանագրով այլ կոնտակտային տվյալներ տրամադրված չեն:

ԳԼՈՒԽ 10. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Առևտրի կետը պարտավորվում է Ծառայությունից օգտվել ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան: Առևտրի կետը կրում է սույն կետի պատշաճ կատարման ողջ պատասխանատվությունը և պարտավորվում է հատուցել դրա չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հետևանքով և/կամ սույն կետով ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների խախտմամբ, ներառյալ՝ շրջանցմամբ կատարված գործարքների համար Բանկին պատճառված իրական վնասը, ներառյալ՝ Բանկի նկատմամբ կիրառված տույժերը:

10.2. Դիմում-պայմանագրով ստանձնած իր պարտավորությունների խախտման դեպքում Առևտրի կետը կրում է լրիվ պատասխանատվություն իրեն պատկանող ամբողջ գույքով: Ընդ որում, Առևտրի կետը պարտավորվում է փոխհատուցել նաև քարտապանին պատճառված վնասը՝ պայմանավորված իրեն հայտնի բանկային գաղտնիք պարունակող տեղեկությունների հրապարակմամբ և/կամ այլ պարտավորությունների խախտմամբ, որոնք հանգեցրել են քարտապանին նյութական վնասի պատճառմանը:

10.3. Առևտրի կետը կրում է էքվայրինգի ծառայության միջոցով կատարված բոլոր գործարքների

հետ կապված ողջ պատասխանատվությունը և ռիսկերը, այդ թվում, բայց չսահմանափակվելով՝ գործարքների չկատարման, ոչ պատշաճ կատարման, անվավեր ճանաչման, հետվճարների, ՀՀ օրենսդրությանը հակասող կամ զեղծարար գործարքների կատարման հետ կապված բոլոր ռիսկերը և դրանցից բխող ցանկացած տեսակի, այդ թվում՝ ֆինանսական հետևանքները/պարտավորությունները՝ Բանկին զերծ պահելով այդ կապակցությամբ երրորդ անձանց կողմից ներկայացվող ցանկացած պահանջներից և/կամ գործարքների հետևանքով կրած իրական վնասի փոխհատուցումից, եթե.

1) Առևտրի կետը նախընտրել է գործարքի հետվճարի (Refund) ֆունկցիան ապակտիվացնել՝ ներկայացնելով Բանկ համապատասխան հանձնարարական.

2) Առևտրի կետի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է քարտի համարի ամրակցման ֆունկցիան, ներառյալ եթե տվյալ կայքում քարտի համարի ամրակցումից հետո տվյալ քարտով հետագա գործարքների համար 3D secure հավաստագրում չի պահանջվում.

3) Առևտրի կետի նախընտրությամբ Ծառայության համար ակտիվացվել է նախահավաստագրման-հաստատման իրավասությունը.

4) Առևտրի կետը 3D secure տարբերակներից նախընտրել է միակողմանի 3D secure՝ ներկայացնելով Բանկ համապատասխան դիմում.

5) Առևտրի կետի կողմից սպասարկվում են այնպիսի վճարահաշվարկային համակարգերի քարտեր, որոնք չեն ապահովում 3D secure կամ որոնց համար Ծառայության Պրոցեսինգային կենտրոնը չի ապահովում 3D secure:

10.4. Առևտրի կետը սույն Պայմանների իմաստով պատասխանատու է իր աշխատակիցների բոլոր գործողությունների համար, որոնք հանգեցրել են կամ կարող են հանգեցնել սույն Պայմանների խախտման:

10.5. Բանկը որևէ պատասխանատվություն չի կրում՝

1) Սույն Պայմանների և վճարահաշվարկային համակարգերի կանոնների խախտմամբ կատարված գործարքների համար,

2) ապօրինաբար գործածվող քարտերով կամ քարտային տվյալներով կատարված գործարքների համար,

3) կայքի և/կամ կապի միջոցների խափանման/անսարքության պատճառով վճարումների սպասարկման անհնարինության համար:

ԳԼՈՒԽ 11. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1. Սույն Պայմաններով չկարգավորված իրավահարաբերությունները կարգավորվում են Բանկի և Առևտրի կետի միջև կնքված դիմում-պայմանագրով, Սակագներով, պայմանագրային հարաբերություններ սահմանող այլ փաստաթղթերով և ՀՀ օրենսդրությամբ, իսկ ՀՀ օրենսդրությամբ կարգավորված չլինելու դեպքում՝ գործարար շրջանառության սովորույթներով: Միաժամանակ բոլոր այն դեպքերում, երբ նշված իրավական ակտերում առկա չեն Կողմերի միջև ծագած իրավահարաբերությունները կարգավորող դրույթներ, ապա դրանք կարգավորվում են քարտային վճարահաշվարկային համակարգերի կանոններով:

11.2. Կողմերը ժամանակավորապես ազատվում են դրանց միջև կնքված պայմանագրով և/կամ Պայմաններով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար պատասխանատվությունից, եթե այդ պարտավորությունների պատշաճ կատարումն անհնար է եղել ՀՀ օրենսդրության համաձայն անհաղթահարելի ուժի հետևանքով:

11.3. Պայմանների կապակցությամբ Կողմերի միջև ծագած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են դատական կարգով:

Պահուստային գումարների չափեր և գործարքների սահմանաչափեր

Ոլորտ	Ինտերնետ էքվայրինգի ծառայության միջոցով կատարվող մեկ գործարքի առավելագույն գումարային չափ	Միջինամսական շրջանառություն (փաստացի կամ պայմանագրում նախատեսված լինելու դեպքում)	Պահուստային գումար
1. Ավիատոմսերի պլանավորված/չպլանավորված (չարթերային) երթուղիներով տոմսերի օնլայն վաճառք	-	18 մլն ՀՀ դրամից ավելի	միջին ամսական շրջանառության գումարի 10%
2. Ճանապարհորդական ծառայություններ – Travel agencies– (ներգնա/արտագնա տուրիստական փաթեթների վաճառք)	-	6 մլն ՀՀ դրամից ավելի	միջին ամսական շրջանառության գումարի 10%
3. Շքեղության ապրանքների, այդ թվում՝ թանկարժեք զարդերի (թանկարժեք մետաղներ, թանկարժեք քարեր, ժամացույցներ), բացառիկ (exclusive) ապրանքների և այլ թանկարժեք պարագաների վաճառք	300.000 ՀՀ դրամ	-	-
4. Խորհրդատվական ծառայությունների մատուցում՝ հեռախոսային կամ օնլայն տարբերակով, երբ Առևտրի կետի հետ առերես չփում չի նախատեսվում	50.000 ՀՀ դրամ	-	-
5. Դրամական հանգանակություններ հավաքող բարեգործական կազմակերպություններ	399.000 ՀՀ դրամ	-	-
6. Սեփական կայքի համար հանգանակություններ (donation)	50.000 ՀՀ դրամ	-	-
7. Քրաուդֆանդինգ (Crowdfunding)	Մինչև 399.000 ՀՀ դրամ ներառյալ	-	-
8. Անկախ ոլորտից	-	330 մլն ՀՀ դրամից ավելի	միջին ամսական շրջանառության գումարի 10%

Հավելվածում ներկայացվածից բացի, Բանկի իրավասու կառավարման մարմնի որոշմամբ և/կամ ներքին իրավական ակտերով նախատեսված այլ դեպքերում կարող են սահմանվել հավելյալ պայմաններ: